

Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտխորհրդի 2015թ. մայիսի 27-ի նիստում
Արձանագրություն № 01-05/15

Գ ի տ խ ո ռ հ ը ղ ի ն ա խ ա զ ա հ , ն ե կ տ ո ռ Ի

Գ.Շ. Գալստյան

Կ Ա Ր Գ

**ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱԶՄՄԱՆ/ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ**

I. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգով սահմանվում են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի Ազգային համալսարանում (այսուհետ՝ համալսարան) ուսումնական դասընթացների ծրագրերի կառուցվածքը և կազմման, ձևակերպման, քննարկման ու հաստատման կանոնները:

1.2. Ուսումնական դասընթացը գիտության, տնտեսության, տեխնիկայի և մշակույթի առանձին ուղղությունը բնորոշող գիտելիքների ամբողջությունն է:

Ուսումնական դասընթացը կարող է ձևավորվել նաև կրթական մոդուլներով:

Կրթական մոդուլն՝ ուսումնառության մեկ կիսամյակի ընթացքում ուսուցանվող, Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի՝ ԿՓԵՀ (ECTS) կրեդիտային արժեք և գնահատում ունեցող կրթական միավոր է: Այն կարող է ներառել դասախոսություններ, գործնական և լաբորատոր պարապմունքներ, հաշվեգրաֆիկական՝ ՀԳԱ և ինքնուրույն աշխատանքներ, կուրսային նախագիծ/աշխատանք՝ ԿՆ/ԿԱ և այլն:

Դասընթացի/կրթական մոդուլի (այսուհետ՝ դասընթաց) բովանդակությունը պետք է համապատասխանի մասնագիտության պետական կրթական չափորոշիչներով սահմանված պահանջներին և դասավանդվող նյութի նշանակությանը՝ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված այլ դասընթացների ուսումնասիրության և դրանց հետ փոխադարձ կապի ապահովման համար:

1.3. Դասընթացի ծրագիրը՝ ուսումնասիրվող նյութի բովանդակությունը բնորոշող հիմքն է:

Դասընթացի ծրագրում բերվում են դասընթացի նպատակն ու խնդիրները, ընդհանուր մեթոդաբանությունը, այլ դասընթացների հետ տրամաբանական/հաջորդական կապը, ծրագրի տեսական/կիրառական բնույթը և դերը՝ ապագա մասնագետի աշխատանքային գործունեությունում:

Ծրագրում ներկայացվում են դասընթացի բաղադրիչների իրականացման հետևյալ հիմնական սկզբունքները և ժամային ընդհանուր ծավալները՝

ա) դասախոսությունների,

բ) գործնական,

գ) լաբորատոր պարապմունքների,

դ) հաշվեգրաֆիկական աշխատանքների,

ե) կուրսային նախագծի/աշխատանքի,

զ) ինքնուրույն աշխատանքների խորհրդատվության և այլնի:

1.4 Ուսումնական դասընթացի ծրագրի կազմման համար անհրաժեշտ հենքային փաստաթղթեր են հանդիսանում մասնագիտության՝

ա) պետական կրթական չափորոշիչը և

բ) ուսումնական պլանը:

II. Դասընթացի ծրագրի կառուցվածքը, կազմումը և ձևակերպումը

2.1. Դասընթացի ծրագիրը կազմում է այն իրականացնող ամբիոնի գիտամանկավարժական փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական աշխատանքային խումբը:

2.2. Ծրագրի կազմման աշխատանքներում ընդգրկվում են գերատեսչությունների և մասնագիտական կրթության շահակից այլ կողմերի ներկայացուցիչներ:

2.3. Դասընթացի ծրագիրը ունի տիտղոսաթերթ (հավելված 1) և հաստատման թերթիկ (հավելվածներ 2, 2.1):

2.4. Դասընթացի ծրագիրը կազմելիս հաշվի են առնում նրա կառուցվածքի երկաստիճանային սկզբունքը, այսինքն՝ դասընթացում ուսումնասիրվող խնդիրները պետք է ներկայացվեն որպես հիմնական և լրացուցիչ գիտելիքներից բաղկացած մի ամբողջություն:

Հիմնական գիտելիքների իմացությունը պարտադիր է դասընթացի տրամաբանված ամբողջության ապահովման և տվյալ մասնագիտության հենքային այլ դասընթացների յուրացման համար:

Լրացուցիչ գիտելիքների մեջ բերվում են այն բաժինները, որոնք առավել մոտ են տվյալ մասնագիտությանը և դասընթացին հատկացված ժամերի ծավալին համապատասխան՝ կարող են ընդգրկվել դասընթացի բովանդակության մեջ:

2.5. Դասընթացի ծրագիրն ունի հետևյալ կառուցվածքը:

2.5.1. Դասընթացի նպատակը և խնդիրները (հավելված 3) - համառոտ տրվում է դասընթացի հիմնական նպատակը և դիտարկվող հիմնախնդիրները, կապը նախորդող դասընթացների հետ՝ դրանց թվարկմամբ, դասընթացի յուրացման արդյուքնում սովորողի ձեռք բերած կոմպետենցիաները (իրազեկվածությունը)՝ գիտելիքները, հմտությունները և կարողությունները:

2.5.2. Դասընթացի ծավալը և ուսումնական աշխատանքների տեսակները (հավելված 4) – բերվում են՝ դասընթացի դասիչը, կրեդիտային արժեքը, դասընթացի ուսումնական բաղադրիչները. դասախոսություններ, գործնական, լաբորատոր պարապմունքներ, հաշվեգրաֆիկական աշխատանք, կուրսային նախագիծ/աշխատանք, սովորողի ինքնուրույն/անհատական աշխատանքներ, ընթացիկ և եզրափակիչ (ստուգարք, քննություն) ատեստավորումներ՝ ըստ կիսամյակների և ժամաքանակների:

2.5.3. Դասընթացի թեմատիկ ծրագիրը (հավելված 5) – ներկայացվում է ուսումնական բաղադրիչների թեմաների մանրամասն շարադրմամբ և յուրաքանչյուրի ժամաքանակներով.

ա) դասախոսություններ (հավելված 5, ձև 1),

բ) գործնական պարապմունքներ (հավելված 5, ձև 2),

գ) լաբորատոր պարապմունքներ (հավելված 5, ձև 3):

2.5.4. Կուրսային նախագիծ/աշխատանք (հավելված 6) – բերվում են՝ նպատակը և խնդիրները, բովանդակությունը և կառուցվածքը, հաշվեբացատրագրի և գրաֆիկական մասի ծավալները, թեմաները և նախնական տվյալները, գնահատման կարգը և ներկայացման ժամկետները:

2.5.5. Հաշվեգրաֆիկական աշխատանք (հավելվածներ 7) – ներկայացվում են՝ նպատակները և խնդիրները, պահանջները բովանդակության և ծավալի վերաբերյալ, թեմաները և նախնական տվյալները, գնահատման կարգը և ներկայացման ժամկետները:

2.5.6. Սովորողի ինքնուրույն աշխատանքը (հավելված 8) – ներկայացվում են՝ աշխատանքների թեմաներն ըստ ուսումնական բաղադրիչների տեսակների (դասախոսությունների կոմպետենցիաների ձևակերպում, նախապատրաստում գործնական և լաբորատոր պարապմունքների, հաշվեգրաֆիկական աշխատանքի, տնային, կուրսային նախագիծ/աշխատանքի

կատարում, աշխատանք համացանցում, մասնակցություն հետազոտական աշխատանքներին, ելույթներ և այլն):

2.5.7. Ատեստավորումներ (հավելված 9) - անց են կացվում երկու փուլով՝ ընթացիկ և եզրափակիչ (ստուգարք, քննություն), ըստ սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման չափանիշների, որոնք համապատասխանում են ուսուցման կրեդիտային համակարգի գործող կարգի դրույթներին.

ա) ընթացիկ ատեստավորում –սահմանված դասընթացներից անցկացվում է կիսամյակում: Անց է կացվում տեստային կամ գրավոր, կամ հաճախումների և առաջադիմության ամփոփման եղանակով, կամ հաշվեգրաֆիկական աշխատանքի, կուրսային նախագիծ/աշխատանք ներկայացմամբ,

բ) եզրափակիչ ատեստավորում – սովորողները ներկայանում են ստուգարքի/քննությանը և պատասխանում լրիվ դասընթացն ընդգրկող տեստերով կամ հարցատոմսերով:

Կատարվում է ընթացիկ և եզրափակիչ (ստուգարք, քննություն) ատեստավորումների արդյունքներով:

Ատեստավորումների տեստերը և հարցաշարերը կցվում են դասընթացի ծրագրին, ներկայացվում սովորողներին և տեղադրվում են ամբիոններին կից հայտարարությունների ցուցափեղկերում:

2.5.8. Դասընթացի ուսումնամեթոդական և տեղեկատվական ապահովումը (հավելված 10) – մասնագիտության պետական կրթական չափորոշիչի պահանջների համաձայն, դասընթացը պետք է ունենա ուսումնամեթոդական և ինովացիոն ապահովում՝ տվյալների բազայի տեսքով, ուր ընդգրկված են յուրաքանչյուր ուսումնական բաղադրիչին և ատեստավորումներին վերաբերող հետևյալ նյութերը.

ա) դասընթացի հիմնական և լրացուցիչ գրականության ցանկեր,

բ) դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, դասախոսությունների կոնսպեկտներ և ուսումնամեթոդական ցուցումներ (տպագրված կամ էլեկտրոնային),

գ) ուսումնական բաղադրիչների թեմատիկ ծրագրեր, գործնական, լաբորատոր պարապմունքների, հաշվեգրաֆիկական, կուրսային նախագիծ/աշխատանքի առաջադրանքների ցանկեր,

դ) համակարգչային ծրագրեր և միջոցներ հաշվեգրաֆիկական աշխատանքներ կատարելու համար,

ե) ցուցադրական նյութեր (պլակատներ կամ դրանց էլեկտրոնային տարբերակները),

զ) ուսուցման ինովացիոն միջոցներ,

է) ինֆորմացիայի որոնման համակարգեր՝ էլեկտրոնային գրադարաններից օգտվելու համար,

ը) սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման տեստեր, առաջադրանքներ և հարցատոմսեր՝ ատեստավորումներ անցկացնելու համար:

Դասընթացի ուսումնամեթոդական նյութերը պետք է արտացոլեն գիտության և մասնագիտության զարգացման արդի մակարդակը, ապահովեն ուսումնական նյութերի շարադրման տրամաբանված հաջորդականությունը և ուսուցման ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը, որոնք կօգնեն սովորողին յուրացնել ուսումնական նյութը, ձեռք բերել կայուն գիտելիքներ և ունակություններ՝ դրանք ապագա աշխատանքային գործունեությունում հաջողությամբ կիրառելու համար:

2.5.9. Մեթոդական հանձնարարականներ դասախոսին – բերվում են՝ դասընթացի տեղը և դերը մասնագիտական պատրաստության ուսումնական գործընթացում, դասընթացի տեսական մասի հիմնադրույթները և այդ գիտելիքների ամրապնդման համար բոլոր ուսումնական բաղադրիչների փոխկապակցումն ապահովող մեթոդական լուծումները, այդ բաղադրիչներով ուսուցման կազմակերպման մեթոդներն ու անցկացման միջոցները, գիտելիքների գնահատման չափանիշները և սկզբունքները, որոնք իրականացվում են դասավանդող դասախոսի կողմից: Ուշադրություն է դարձվում ուսուցման ինովացիոն տեխնոլոգիաների կիրառմանը:

Մեթոդական հանձնարարականները տրվում են ուսումնական յուրաքանչյուր բաղադրիչի համար՝ հիմք ընդունելով դասընթացի տեսական մասի հիմնադրույթների ներկայացումը, ինչպես նաև մյուս բաղադրիչների գծով իրականացվող աշխատանքների բովանդակությունը և ծավալը:

2.6. Դասընթացի ծրագիրը պետք է կրի համակարգային բնույթ, նրանում պետք է հստակ սահմանված լինեն միջդասընթացային կապերը (հավելված 11):

III. Դասընթացի ծրագրի քննարկման և հաստատման կարգը

3.1. Դասընթացի ծրագիրը նախապես քննարկվում է ծրագիրը կազմող ամբիոնում, կատարվում է անհրաժեշտ փոփոխումներ և հավանության արժանանալու դեպքում այն ներկայացվում է մասնագիտացնող ամբիոնի համաձայնեցմանը:

Հումանիտար, հիմնարար և բնագիտական կրթամասերի դասընթացների ծրագրերը ուղղակի ներկայացվում են համալսարանի Գիտական խորհրդի հաստատմանը:

3.2. Մասնագիտացնող ամբիոնը քննարկում և տալիս է դասընթացի ծրագրի փորձագիտական գնահատականը, որի ընթացքում ծրագիրը կազմողների հետ համատեղ դիտարկվում են առաջարկված փոփոխություններն ու ճշգրտումները: Ծրագրի համաձայնեցման որոշումները գրանցվում են համաձայնեցման թերթիկում (հավելված 11):

3.3. Հավանության արժանացած ծրագիրը ներկայացվում է համալսարանի Գիտական խորհուրդ:

3.4. Դասընթացի ծրագիրը ենթակա է վերանայման.

ա) բակալավրի կրթական աստիճանում՝ 4 տարին լրանալու դեպքում,

բ) մագիստրոսի կրթական աստիճանում՝ 2 տարին լրանալու դեպքում,

գ) հետբուհական (ասպիրանտական) կրթական աստիճանում՝ 3 տարին լրանալու դեպքում:

IV. Եզրափակիչ դրույթներ

4.1. Սույն կարգը հաստատվում, փոփոխվում և լրացվում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

4.2. Սույն կարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդի որոշումը համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո տասներորդ օրը:

4.3. Այն հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնակարգում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով և Համալսարանի կանոնադրությամբ:

Գիտական քարտուղար՝

Լ.Հ. Լևոնյան

27 մայիսի 2015թ.

գիտխորհրդի արձանագրություն № 01-05/15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
Գիտական խորհրդի նիստում.
Ռեկտոր՝ _____ Գ.Շ. Գալստյան
«_____» _____ 2015թ.

(դասընթացի անվանումը)

ԳԱՍԸՆԹԱՅԻ ԾՐԱԳԻՐ

Կրթական աստիճանը՝ (բակալավր, մագիստրոս, հետազոտող)

Մասնագիտություն(ներ)՝

«_____»
(դասիչ և անվանում)

ՀԱՍՏԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Կազմողներ՝ _____
 (անուն, ազգանուն) (գիտ. աստ., կոչ.) (ստորագրություն)

Գրախոս(ներ)՝ _____
 (անուն, ազգանուն) (գիտ. աստ., կոչ.) (ստորագրություն)

Քննարկվել և հավանության է արժանացել.

_____ ամբիոնի՝ 20.. թ. _____ թիվ _____
 (ամբիոնի անվանումը) (ամսաթիվ)

նիստում:

Ամբիոնի վարիչ _____
 (անուն, ազգանուն) (գիտ. աստ., կոչ.) (ստորագրություն)

_____ ֆակուլտետի՝ 20.. թ. _____ թիվ _____
 (ամսաթիվ)

նիստում:

Ֆակուլտետի ղեկավար _____
 (անուն, ազգանուն) (գիտ. աստ., կոչ.) (ստորագրություն)

Ուսումնական մասի պետ _____
 (անուն, ազգանուն) (գիտ. աստ., կոչ.) (ստորագրություն)

(Համահամալսարանական ամբիոնները ֆակուլտետի հաստատման փոխարեն ներկայացնում են ուսումնական մասի հաստատմանը)

Կրթական մոդուլ՝ _____

Կրեդիտ՝ _____

Մասնագիտություն(ներ)՝

« _____ »
(դասիչ և անվանում)

« _____ »
(դասիչ և անվանում)

« _____ »
(դասիչ և անվանում)

Մասնագիտացում(ներ)՝ (եթե կան այդպիսիք)

« _____ »
(դասիչ և անվանում)

« _____ »
(դասիչ և անվանում)

Կրթական մոդուլ՝ _____

Կրեդիտ՝ _____

Մասնագիտություն(ներ)՝

« _____ »
(դասիչ և անվանում)

« _____ »
(դասիչ և անվանում)

« _____ »
(դասիչ և անվանում)

Մասնագիտացում(ներ)՝ (եթե կան այդպիսիք)

« _____ »
(դասիչ և անվանում)

« _____ »
(դասիչ և անվանում)

1. ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դասընթացի նպատակն է՝ _____

_____ :
_____ :

Դասընթացում դիտարկվում են _____

_____ հիմնախնդիրները, որոնք վերաբերվում են _____
_____ բնագավառին:

Դասընթացը յուրացնելու համար անհրաժեշտ են գիտելիքները հետևյալ դասընթացներից.

1. _____,
2. _____,
3. _____:

Դասընթացի իրականացման արդյունքում սովորողը ձեռք է բերում.

✓ գիտելիքներ.

- _____,
- _____,
- _____:

✓ հմտություններ և կարողություններ.

- _____,
- _____,
- _____:

2. ԳԱՍԸՆԹԱՅԻ ԾԱՎԱԼԸ, ԿՐԵՂԻՏԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

№	Ուսումնական աշխատանքի տեսակը	Ժամաքանակը
Կրթական մոդուլ`----, կրեդիտային արժեք`----, կիսամյակ`----		
1	Դասախոսություններ	
2	Գործնական պարապմունքներ	
3	Սեմինար պարապմունքներ	
4	Լաբորատոր պարապմունքներ	
5	Կուրսային նախագիծ/աշխատանք*	
6	Հաշվեգրաֆիկական աշխատանք*	
7	Սովորողի ինքնուրույն աշխատանք	
8	Սովորողի անհատական աշխատանք	
9	Ատեստավորումներ.	
9.1	ընթացիկ*	
9.2	Եզրափակիչ (ստուգարք, քննություն)*	
	Ընդամենը`	
Կրթական մոդուլ`----, կրեդիտային արժեք`----, կիսամյակ`----		
1	Դասախոսություններ	
2	Գործնական պարապմունքներ	
3	Սեմինար պարապմունքներ	
4	Լաբորատոր պարապմունքներ	
5	Կուրսային նախագիծ/աշխատանք*	
6	Հաշվեգրաֆիկական աշխատանք*	
7	Սովորողի ինքնուրույն աշխատանք	
8	Սովորողի անհատական աշխատանք	
9	Ատեստավորումներ.	
9.1	ընթացիկ*	
9.2	Եզրափակիչ (ստուգարք, քննություն)*	
	Ընդամենը`	
	<i>(Անհրաժեշտության դեպքում ավելացնել)</i>	

*-նշված աշխատատեսակների համար ժամաքանակի պլանակում տվյալ աշխատանքի առկայության դեպքում նշանակել «+», իսկ բացակայության դեպքում` հանել տողն ամբողջությամբ:

3. ԳԱՍԸՆԹԱՑԻ ԹԵՄԱՏԻԿ ԾՐԱԳԻՐԸ

3.1 ԳԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հավելված 5, ձև 1

№	Կրթական մոդուլի և թեմայի անվանումները	Ժամաքանակը
1	(ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ)	(Ընդհանուր ժամաքանակը)
1.1	(Թեմայի անվանումը և նկարագրությունը)	(Թեմային տրվող ժամաքանակը)
1.2	(նույնը)	(նույնը)
1.3	(և այլն)	

3.2 ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆԴՆԵՐ

Հավելված 5, ձև 2

№	Գործնական պարապմունքի թեմայի անվանումը	Ժամաքանակը
1	(ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ)	(Ընդհանուր ժամաքանակը)
1.1		2
1.2		2
1.3		

3.3 ԼԱԲՈՐԱՏՈՐ ՊԱՐԱՊՄՈՒՆԴՆԵՐ

Հավելված 5, ձև 3

№	Լաբորատոր պարապմունքի թեմայի անվանումը	Ժամաքանակը
1	(ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ)	(Ընդհանուր ժամաքանակը)
1.1		2
1.2		2
1.3		

Հավելված 6

3.4 ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ/ԱՇԽԱՏԱՆՔ

(ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ)

Բերվում են.

- կուրսային նախագծի/աշխատանքի նպատակը և խնդիրները,
- բովանդակությունը և հաշվեբացատրագրի կառուցվածքը,
- հաշվեբացատրագրի և գրաֆիկական մասի ծավալները,
- թեմաները և նախնական տվյալները,
- գնահատման կարգը և ներկայացման ժամկետները:

3.5 ՀԱՇՎԵԳՐԱՖԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ
(ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ)

Բերվում են.

- հաշվեգրաֆիկական աշխատանքի նպատակը և խնդիրները,
- պահանջներ բովանդակության և ծավալի վերաբերյալ,
- թեմաները և նախնական տվյալները,
- գնահատման կարգը և ներկայացման ժամկետները:

3.6 ՍՈՎՈՐՈՂԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

№	Ինքնուրույն աշխատանքի թեմայի անվանումը	Ժամաքանակը
1	(ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ)	(Ընդհանուր ժամաքանակը)
1.1		
1.2		

Որպես ինքնուրույն աշխատանք կարելի է նշել.

- կուրսային նախագծերի/աշխատանքների, հաշվեգրաֆիկական աշխատանքների կատարումը,
- ռեֆերատների, տնային և ստուգողական աշխատանքների կատարումը,
- նախապատրաստումը գործնական և լաբորատոր աշխատանքներին,
- դասախոսությունների կոնսպեկտների ձևավորումը,
- աշխատանքը ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների միջավայրում,
- մասնակցությունը հետազոտական աշխատանքներին և հաշվետվությունների կազմմանը,
- ելույթները գիտաժողովներում, ելույթների թեզիսների և հոդվածների պատրաստումը և այլն:

3.7 ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄՆԵՐ

(Ներկայացնել այն բոլոր բաղադրիչները, որի արդյունքում ձևավորվում է սովորողի եզրափակիչ ատեստավորման (ստուգարք, քննություն) միավորը:)

3.7.1 Ընթացիկ ատեստավորում: Կիսամյակում կազմակերպվում է ընթացիկ ատեստավորում, որն անցկացվում է.

- տեստային եղանակով, համապատասխան բլանկների կամ համակարգչային միջոցների օգտագործմամբ,
- գրավոր եղանակով. սովորողներին նախօրոք տրված հարցաշարի միջոցով,
- ստուգողական աշխատանքների և ռեֆերատների ներկայացմամբ,
- հաճախումների և ընթացիկ առաջադիմության արդյունքներով,
- հաշվեգրաֆիկական, կուրսային նախագիծ/աշխատանք առաջադրանքների ներկայացմամբ:

3.7.2 Եզրափակիչ ատեստավորում (ստուգարք, քննություն):

Սովորողը ներկայանում է եզրափակիչ ատեստավորման՝ քննաշրջանի ստուգարքին (քննությանը), որն անցկացվում է դասընթացը լրիվ ներկայացնող տեստերով կամ հարցատոմսերով (ստուգարքների և քննությունների տեստերը և հարցաշարերը կցվում են տվյալ բաժնին), որոնք ուսումնական տարվա սկզբին ներկայացվում են սովորողներին: Դրանք լրիվ բերվում են այս՝ 3.7.2 բաժնում:

4 ԴԱՍԸՆԹԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՒԴԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Կազմվում է դասընթացի տվյալների բազա, որը կարող է ձևավորված լինել փաստաթղթային կամ համակարգչային տեսքով:

Դասընթացի տվյալների բազան ներառում է.

- դասընթացի ծրագիրը,
- դասընթացի ուսումնական բաղադրիչներին վերաբերող ուսումնամեթոդական նյութերը՝ դասախոսությունների կոնսպեկտը, գործնական, լաբորատոր աշխատանքների

կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական ցուցումները և ձեռնարկները, կուրսային նախագծերի/աշխատանքների, հաշվեգրաֆիկական աշխատանքների, ռեֆերատների կատարման և ձևավորման կարգացույցերը և առաջադրանքների ցանկերը,

- դասընթացին վերաբերող ժամանակակից տեսալսողական միջոցները, ստենդային և էլեկտրոնային ցուցադրանյութերը, համակարգչային հաշվեգրաֆիկական ծրագրերը,
- դասընթացի ուսումնական բաղադրիչներին վերաբերող հիմնական և օժանդակ գրականության ցանկերը, գրականության էլեկտրոնային տարբերակները,
- ինֆորմացիայի որոնման համակարգեր՝ էլեկտրոնային գրադարանից օգտվելու համար,
- ընթացիկ և եզրափակիչ ատեստավորումների անցկացման տեստերը և հարցաշարերը:

Հավելված 11

5 ՄԻՋԴԱՍԸՆԹԱՑԱՅԻՆ ԿԱՊԵՐ (ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ)

Տվյալ դասընթացի նյութերն օգտագործող այլ դասընթաց(ներ)ի անվանումը	Ամբիոն	Առաջարկված փոփոխությունը	Ամբիոնի հաստատում